

Մեզ գրում են, որ այս օրերս Սարգսյան թուրքական զորքերը, որ Հուլիսից ոչ հեռու է գտնվում, մի թուրք դաշտին հարձակում կրել է իր կնիքը գրելը, որ և անմիջապես մեռել է:

Մի ոմն Գրիգոր Պապուկյանը գրում է մեզ ՌԱԳՈՒՅ հետևյալը: «Կարգավորվել է մեր լրագրի 73-դ համարում «Պարտաւոր ենք զգուշացնել» առաջնորդող յօդուածը, ես ևս պարտք եմ համարում մի անգը պատմել իմ գլխիս եկածը Գլխիկին, Բլուկի կանտորայի վերաբերմամբ: Անցեալ տարի, դեկտեմբեր ամսի 30-ին Գ. Բլուկի տեղիս ազնւոյ Զաքարիայ ստացաւ մի խաղատոմսի անդորրագիր և պատկանեալ բեհը՝ 15 բուրլի 90 կօպկ տուեցի, որից յետոյ պարտ էի վճարել 5 կօպ 10 բուրլի ամսական, երեք և կէս տարվայ միջոցում: Բայց զործս, մանաւանդ ժամանակս չը ներկու պատճառով, վճարելի որ միանգամից հաւաքեմ փողս, ուղարկեմ ու վերջացնեմ: Այդպէս յունվար ամսի 7-ին ճանապարհեցի տունակի մնացեալ փողը, որ իմ հաշուով 223 բուրլի պէտք է լինէր, որ տեղս տուած բեհի հետ անում է 239 բուրլի: Իսկ բօրսայի կուրսով տոմսակը այդ ժամանակ արժէր 231 բուրլի և մի քանի կօպէկ: Բայց ինչ, յանկարծ ստանում եմ պ. Բլուկից մի նամակ, որի մէջ նա պահանջում է ևս 38 բուրլի 28 կօպ, մինչև մարտի 30-ը: Ես չը յօժարվելով այդքան մեծ 9/0 վերաճեցում կարծ ժամանակի համար, նամակով ինքնիցի պարտից մանրամասն հաշիւ: Ո՛րքան եղաւ դարմանքս, երբ ստացայ նոր նամակ նոր հաշուով՝ թէ մինչև յունիսի 30-ը պարտաւոր եմ վճարել 59 ր. 72 կ., եթէ ոչ տոմսակս կը ծախվի, իսկ ինձ կը դարձնուի կօմ միսիական և այլ ծախսերը հանելուց յետոյ, 145 ր. 54 կօպ: Ի՞նչ պիտի անել, բարեք համարեցի տալ այդ 59 ր. 72 կ. և աղատվել պ. Բլուկի թղթաբեղի: Գրում եմ ի գիտութիւն հասարակութեան, եթէ ևս խաբուցել, գտնէ իմ դասը ուրիշներին օրինակ լինի. և նրանք չը հաւատան Քիւնանական այլ և այլ յայտարարութիւններին, պ. Բլուկի յայտարարութիւններին պէս, որոնցով լի են այժմ ամեն լրագիրները»:

Մեզ պատմում են որ անցեալ չաբաթ մի գիւղացի, որքան յիշում ենք չուլվերցի, գիւղից գէպի թիֆլիս սայլով աւել տանելիս, սայլի առնիկ տակ ընկնելով, անմիջապէս հոգին աւանդում է:

Թուլիսի 9-ին, ինչպէս պատմում են, ԿՕՋՕՐԻՑ ոչ հեռու գտնվող սարերի վրա կարկուտ էր եկել, և այդ օրից եղանակը ԿՕՋՕՐԻՑ բաւական ցրտեղ էր: Բայց յուլիսի 11-ից սաստիկ քամին դադարեց և եղանակը կրկին տաքացաւ:

ՇՈՒՇՈՒՑ մեզ գրում են: «Այստեղ լուր է տարածված, որ նորընծայ Կարապետ Ալազանե եւ պիկետաժոր գալու է այստեղ առաջնորդի պաշտօնը»:

Հայկ չորս տարի դրանից առաջ, հէնց որ մեռել էր իր մայրը, թողել էր համալսարանի իրաւաբանական բաժնումը, չը վերջացնելով իր ուսումը: Մէյրան աղայի այդ ժամանակուայ բազմաթիւ նամակները այնքան սրտաշարժ էին, այնքան պերճալիս էին ընտանեկան դժբաղդութեան, միայնակութեան, սրտատուր կարօտի մասին, որ Հայկը վերջ ի վերջոյ հաւանել էր այդ նամակների մտքին և համոզվելով, որ ինքը մի վարձկան փաստաբան լինել չէ կարող, իբրեւ մի մեծ հարստութեան միակ ժառանգ, թողել էր ամեն ինչ և շտապել էր իր պապի թախուր մնացած օջախը շէն անելու և կենդանացնելու»:

Առաջին տարին նա համոզված էր, որ իսկապէս կենդանացնում է Մանգլեանցիների օջախը, և, բացի դրանից, նա կատարեալ յարմարութիւն էր գտնում իր սիրած գաղափարները ժողովրդի մէջ տարածելու համար: Նա մի ճշմարտաւէր մարդ էր, որ լուր չէ սիրում: Եւ որովհետեւ ճշմարտախօսները իրական աշխարհում չեն ծնում ու ծաղկում, մանաւանդ հայ ազգի մէջ, ուստի նրա անհոգ կեցութիւնը երկարատեւ չէր, չուսով հարկադրված էր նախ քաղաքավարի, ապա կոպիտ բանակաւորներ ունենալ Սէյրան աղայի հետ: Այդ բանակաւորները շատ անհշտն ծողումն ունէին, բայց մի կողմից երկրասարդի տաք բնա-

նով, իսկ այստեղի այժմեան առաջնորդ Սադիկ-նեանին, ասում են, նշանակում են Սինօքի նախագահ, Բաբաբանան արքեպիսկոպոսի տեղ, որին ուղարկում են Բեսարաբիա առաջնորդի պաշտօնով»:

Վլադիկավկասի վաճառական Սիմէօն Օթման, խնդրում է մեզ տպել հետեւեալը: «Վլադիկավկաս քաղաքը գտնվելով Ռուսաստանի մեծ ճանապարհի վրա, անպակաս են այստեղ փողի նեղութիւնը կողմ ճանապարհորդներ: Տանջ միայն նստած եւ, յանկարծ ներկայանում է քեզ մի հայաստանցի մարդ՝ կին, որդիք ու աղջիկներ հետն առած, լաւազին ձայնով ասում է ձեզ, «աղա ջան, մենք էլ ձեզ պէս հարուստ էինք, բայց անիրաւ քրտրեքը մեր կայքը յափշտակեցին, աներս, խանութներս կրակի մատնեցին, որդուս պատանդ վերցրին, փող պիտի տամ որ ներան ազատեմ. ողորմութիւն արեք, օգնեցեք ձեր հայ եղբորը»: Երկրորդը՝ որդուս է որոնում, ճանապարհի ծախսը պակասել է: Երրորդը՝ հայաստանցի անձնագործ գործիչ, ինտիլլիգենտ դասակարգից, օտարութեան փառքն ու պատիւը թողած, վերադառնում է Հայաստան, ժողովրդի նեցուկ դառնալու, նրա մէջ կրթութիւն տարածելու. բայց փողը պակասել է նրան, նա մուրալ ամաչում է և խոտտանում է թիֆլիս հասնելուն պէս ձեր փողերը յետ դարձնել: Ի՞նչ անես, հաւատում են նրան, ենթադրելով եւ նրա գործածած ճարտիկ լեզուին և տալիս են փող: Այդ դասակարգիցն էր և Արտաշէս Դէորդեան Ալաւն-բէգեան անունով մէկը: Այս տարի մարտի 24-ին Պետերբուրգից իբր թէ Հայաստան դառնալով, երկու օր չէր հեռանում ինձանից: Վերջը 25 բուրլի պարտք տուի նրան երկու չաբաթ ժամանակով: Բայց մինչև այժմ, երեք ամիս անցնելուց յետոյ, ոչ պարտքս դարձրեց, ոչ էլ գլխում որտեղ է գտնվում այդ պարտքը: Ուրիշ հնարք չունենալով պարտին գտնելու, գիտում եմ ձեր լրագրին, խնդրելով լրագրի մի անկիւն չորհէք ներկայ գրութեանս»:

Պետերբուրգի լրագիրները հաղորդում են որ շուտով Բաթումի մէջ կը բացվի պետական բանկի մի բաժին:

«НОВОСТИ» լրագիրը հաղորդում է, որ 200,000-ը վերջին խաղարկութեան ժամանակ ընկաւ վաճառական Զոմիանին Մեքլենբուրգին:

Անցեալ չաբաթ չաբարի առևտուրը Մոսկվայում շատ թղթ էր: Հայի առևտուրը թէ Պետերբուրգում և թէ Մոսկվայում խաղաղ է: Բաթումի գինը Մոսկվայում էլի ընկաւ: Երևանի բաթումը ամերիկական սերվով ծախվում է 9 ր. և 9 ր. 50 կ. պողով. Բուխարային 7 ր. 50 մինչև 8 ր.: Մադագագարանին 7 ր. մինչև 7 ր. 40 կ. պողով:

Եւրոպեան, միւս կողմից Սէյրան աղայի յամառութեան չորհրդ, հետզհետէ սուր բնաւորութիւն էին ստանում, հետզհետէ Հայկին աւելի ևս տաքացնում էին, իսկ աղային հաւատացնում էին թէ իր եղբոր թոռը փչալած տղայ է, ունի տարափեղ լինել ցանկութիւն կիծել ամեն մէկին, կիտել, սեղմել ամեն մի անդամ, որ ընկնում էր նրա ձեռքը:

Մի դէպք չուսով այդպիսիցն նրա այդ կարծիքը: Հայկը աշխատակից էր մի թերթի, գրում էր միշտ յարձակողական կիծու յօդուածներ, չը լինայելով պարզ անուշանքի հետ դնել կեղծոտութիւններ, ստույթիւններ և այլ աղբակաւոր անշարժ ու գեղեցիկ յատկութիւններ: Կրթւ բազմին հաճելի էր եղել անօրինակ այնպէս, որ Հայկի յօդուածները մէկում մի ինչ որ միտք արծարծելու համար գրած էր, իբրեւ օրինակ, մի հարուստ ձեր մարդ, որ աշխարհի մէջ ամեն անեակ բարբորութիւն տեսնում է սեփական որովայնի մէջ և մարդութիւնը հասկանում է տեսնելու, ընտրելու, սիրելու և ուտելու մտքով և այլ այսպիսի գայնի, որոնք այնքան առատ են մեր մէջ: Զօրութեան օգուտ քաղեցին Հայկի «Էծոտած», մարդիկը, իսկ այդպիսիների պոկատութիւնը չը կար: Նրանք շտապեցին Սէյրան աղայի գլուխը ամէկ այն միտքը, թէ այն բոլորը միայն նրան էին վերաբերում և ոչ թէ մի ուրիշին: Գործադրաբար Սէյրան աղան շատ վաղուց բարկացած էր մի կիպել զրուգի մի ինչ որ նպատակի համար. այդ օրից նա հաւատացած էր, որ բոլոր գրողները անպէտք

Ուրբաթ, ամիս 11-ին, երեկոյան ժամի 10-ին թիֆլիս հասաւ ուսուց պատերազմական մի-նիստը Վանսօյիկին:

Զուլիսի սկզբներում, մի քանի օր չոր անելուց յետոյ, վերջին օրերը եղանակը թիֆլիսում փոխվեցաւ քամիների պատճառով. իսկ չաբաթ օր յարգաւատ անձրեւ եկաւ և եղանակը միանգամայն աշնանային էր:

ԷՋՄԻԱՄԵԼԻՑ մեզ գրում են յուլիսի 6-ից. «Ռուսականների տալած ծրագրիները ուղարկվեցան թեմական առաջնորդներին»:

Ռուսականների տալած ծրագրիները արդէն թիֆլիսի հայոց կոնսիստորիայում ստացվել են, մի կօնդակի հետ ու Առաջնորդի անունով:

Ամիս 13-ին, առաւօտեան ժամի երկուսին, դէպի Հաւաքար տանող ճանապարհի վրա, Մե-տեխի բանտի դիմացը գտնվող Սարաջեանի երկ-յարկանի տան մի մասը քանդվեց, առանց մի շէնս պատճառելու բնակիչներին: Թէև տան մնացած մասն էլ սպառնում է բաւել առ բաւել խոր տակվելու, բայց արդէն մշակները սկսել են բանել առանց մի որ և է զգուշութեան միջոցների դիմելու: Լաւ կը լինէր, որ ստիկանութիւնը բո-լորովին արգելէր այդտեղ բանելու և ճանապարհի երկու կողմն էլ կապէր:

Մեզ գրում են հետեւեալը: «Որովհետեւ Զօփու-ռի տղերանց ահից մարդիկ չեն կարողանում մի տեղից միւս տեղ գնալ, ուստի Հուլիսից գաւառապետի հրամանով Օփիլթ յոյնացեալ գիւղից, Հուլիսից 13 վերստ հեռաւորութեամբ, և Ալ-բորիի հայաբնակ գիւղից ընտրել են մօտ 20 հոգի քաջ որսորդներ, տուել են նրանց «այնալու» հրացաններ և բաւական գնտակներ ու իւրաքանչիւրին ամսական 25 բուրլի փող և ուղարկել են աւազակների դէմ: Այդ երկու գիւղերի բնակիչները, յոյն և հայ, յայտնի են իբրեւ առաջին քաջեր ու փորձված լեռնական որսորդներ. սրանց ձեռքով բռնվել են արդէն շատ աւազակներ: Եւ ահա, յունիսի 26-ից սկսած այդ մարդիկ որոնում են յիշեալ աւազակներին և, ինչպէս լսում է, Հայի-Վարա ձորում արդէն վերադարձ են, ոմանք ասում են սպանել են, Զօփուռի անդրանիկ տղայ Սօլոմանին: Հայի-Վարա ձորի միւս կողմը Աբա-րանն է»:

Հեռագիրը արդէն լուր բերեց մեզ այն փոփո-խութիւնների մասին, որոնք վերաբերում են ուսուց կայսերական տան անդամների իրաւունք-ներին, պարտաւորութիւններին, և ժառանգական արտօնութիւններին: Ուրիշ փոփոխութիւնների հետ միասին, փոփոխված են և Կայսերական Տան անդամների ապրուստի համար պետութեան հարս-տութիւնից նշանակված գումարների քանակու-

մարդիկ են, պարապաւները, որոնք համար մեծ հաճութիւն է մարդկանց կերած-խածը հաշուել ու ծաղրել, թէ և մասամբ տեղեկացել էր, որ այդպէս են և ամենքը, որ քաղցած են, ուստի և նախանձառ են: Բայց դրանից, Սէյրան աղան, ինչպէս մի հին մարդ, սաստիկ ատում էր այն մարդկանց, որոնք իրանց ընտանիքի գաղտնիքը, այսպէս անուշամած չօջախի ուրիշ պարզում են հրապարակներին մէջ, նրա կարծիքով տան յարկը պիտի ծածկէր այն ամենը, ինչ ընտանիքի առօրեայ կեանքի սեփականութիւնն է: Այդ բոլորը այն հասկանալի հետեանքն ունեցաւ, որ նա մի ժամում հաւատացած էր, թէ Հայկը իր թշնամի-ները մէկն է: Տաք բանակաւորները տուել շատա-յան, երկրասարդը միշտ յաղթուն էր մնում աղայի մի դէպքից, ծերունին հմուտ էր սարսափել իր յօդուածների մէջ, որոնցով համոզում էր իր խօսքերը, թէ և երբեմն տուած էր թէ հայոցում է ոչ վերաբերում համար: Այդ համոզութիւն-ները, վերջապէս, այն աստիճան զգուսցրին, որ երկրասարդը հեռացաւ նրանից և ընտելում էր ներքին յարկի մի անհեղձութեան, ինչպէս մի օտո-րական, ինչպէս մի վաղուց բաժնակալ ժառանգակից:

Յարաբերութիւնները իրաւաւ կորվեցան այն օրից, երբ Հայկը պատկիւց մի աղքատ, որը և այլի վարձուհու հետ: Սէյրան աղայի համար դա ամենամեծանշան անպատուութիւն էր: Մի քանի օր նա բոլորովին հայ չէր ուտում, այնքան դա-րացած էր, այնքան սուր էր նրա սրտի վիշտը: Նրա բարեկամ աղաներն էլ, ինչ ասել կուզէ,

թիւնը, հետեալ կերպով, Թագուհին, որ առաջ-վայ օրէնքով ստանում էր տարեկան 600 հազար լուրի, այժմ կը ստանայ 200 հազար: Թագամա-ռանգը, բացի իր պալատի ծախսերից, կը ստանայ 100 հազար, փոխանակ 300 հազարի, իսկ ամուս-ինը կը ստանայ 50 հազար: Կայսրի որդեկրանցից (բայց Թագամառանգը) իւրաքանչիւրը կը ստանայ տարեկան 150 հազար լուրի, փոխանակ 500 հազա-րի, իսկ ամուսնանալուց յետոյ 200 հազար: Նո-ցա ամուսնանքը առանձին կը ստանան իւրա-քանչիւրը տարեկան 40 հազար լուրի:

Հաստատ աղբիւրից իմանում ենք, որ հայր Ղե-ւոնդ Ալիշանը պատրաստում է և շուտով կը սկսի տպագրվել մի նոր և մեծ աշխատութիւն՝ «Ա-ր տ ր ա տ ե ա ն ն ա ճ ա ն գ ի տ ե ղ ե կ ա գ ի ր ք »: Այդ նոր աշխատութիւնը ուսումնասիրում է Ա-րարատեան նահանգի պատմական, ժողովրդա-գրական, հնագիտական, քաղաքական թէ անցեալ և թէ ներկայ բոլոր հարստութիւնները: Տաղանդաւոր աշխատասիրողին մեծ յարգանք և օգնու-թիւն ցուց տուած կը լինեն նրանք, որոնք չեն պիտի հաղորդելու և ուղարկելու նրան այն բո-լորը, ինչ որ կարող է նպաստել յիշեալ նահանգի մանրամասն և գիտական ուսումնասիրութեան գործին, ինչպէս, զանազան յիշատակարաններ, ձեռագիրներ, հնութիւններ, դրամներ, տեղեկու-թիւններ, աւանդութիւններ, դոկումենտներ և այլն և այլն: Լուսմ ենք, որ այդ նոր աշխատու-թիւնը աւելի մեծ կը լինի քան նոյն իսկ նշանա-ւոր «Սիւռնանք»: Այդ նպատակով հայր Ալիշա-նի հետ գրադարութիւն անել ցանկացողները պիտի դիմեն նրան հետեալ հասցեով. Վենետիկ, Մի-թարեան միաբանութիւն, հայր Ղեւոնդ Ալիշանին:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԼԱԳՍՏՈՆ ԵՒ ԻՐԱՆԻԱ

Իրանդիայի ինքնավարութեան վերաբերեալ պարլամենտական քննութիւնները, վիճաբանու-թիւնները և ձեական ուսումնասիրութիւնները վերջացան, ուրիշ խօսքերով՝ Իրանդիայի պա-րլամենտական ինքնավարութեան խըն-դիրը գրկվեցաւ զոյութիւնից:—Մեծ-Բրիտանիան մեծ յաղթանքների ենթարկվեցաւ վերջին ամիս-ներում: Ամբողջ լուսաւոր աշխարհը խորին ուշա-դրութեամբ դիտում էր այն հետաքրքիր, ծանրա-կշիւ եղբուկութիւնները, որոնք զբոլեցնում էին անգլիական օրէնքը, անգլիական ազգը, և անգ-լիական քաղաքական բոլոր կուսակցութիւնները: Լճից մի պարլամենտի ազատամիտ, պահպանողա-կան և այլ կուսակցութիւնների շարժումներին ամենաբաւական հետաքրքրութեամբ հետևում էին եւրօպական շատ երկրների նոյն անունները կրող քաղաքական կուսակցութիւնները:—Մի քանի ամսուայ ընթացքում մեծ փոփոխութիւններ տեղի

կրակի վրա իւր էին ածում. տոհմային պատուի ցեխոտվելը, չար մարդկանց բերանի խօսք դառ-նալը, պատուաւոր բարեկամներ ճարկուց գրկվե-լը—այդ բոլորը մանր բաներ չէին մի քանի տա-նեակ տարիներ աշխարհի մէջ յարդ ու պատիւ, վայելած մարդու համար: Բայց մի օր տեսնելով հայելու մէջ իր դեղնած դէմքը, նա վախեցաւ, թէ մի գուցէ հիւանդանայ, սարսափը ծնեցրեց մի միտք—կարեցածի չափ մոռանալ ամեն ինչ, կըր-կին շարունակել սովորականի պէս ուտել, և ե-թէ կարելի լինի, աշխատել, որ «փչացած» Հայ-կը իր աղգանտունը չը կրէ, իրան բարեկամ չը համարվի: Այս պատճառով նա գրկել էր Հայկին կարողութիւնից հաղորդակցութիւն ունենալ իր տան, իր ունեցած չունեցածի հետ, իր անտեսու-թեան հետ: Ծառային խտիւ կերպով արգելված էր փայտը Հայկի սենեակներից մօտիկ տեղ չը կուտել, լուսացարար կիճը իրաւունք չունէր չորեւ-դէնները վաւել բալի այն կողմում, ուր ընկած էր երկու անգղանիների ճանապարհը: Բայց չը նայած այդ բոլոր խտուրթիւններին, Սէյրան աղան միշտ վախում էր, միշտ կարծում էր թէ Հայկը եթէ մի օր չը զոգանայ, չէ կարող ապրել: Հայկն էր պատճառը, որ նրա փայտը, նաւթը շուտ էր վեր-ջանում: Հայկը գողանում էր—դա մի սուրբ ճշմարտութիւն էր նրա համար: Նա ներք չէր կարող այնպիսիներին, որոնք տարակուսանք էին յայտնում այդ գողութիւնների վերաբերմամբ:

(Կը շարունակվի)

ունեցան. երկար տարիներով կազմակերպված իր-
ւանդական ինքնավարութեան խնդիրը մտաւ ի
դոնի պարլամենտի գործունէութեան շրջանը, և
իր վրա դարձրեց բոլորի ուշադրութիւնը: Գլխա-
ւորն առաջ եկաւ իր նախագծերով: Ազատամիտ
միտիստութեան մի քանի անդամները յետ գնա-
ցին: Նրանց տեղը բռնեցին նորերը: Գլխաւորն
կարծեալ վերջնականապէս պարզեց իր դրօշը:
Պարլամենտական կուսակցութիւնները լարեցին ի-
րանց ոյժերը: Լարեցին իրանց ոյժերը և իրան-
դիան, Զօտանդիան և Ուստանդը: Չայն բար-
ձրացրեց մամուլը: Միտիստները յայտարարե-
ցին միտիստներին. ոչ միայն Մեծ-Բրիտա-
նիայում, այլ և հեռու Ամերիկայում և Աւստրալիա-
յում: Իրականում իր վրա դարձրեց բոլորի ուշա-
դրութիւնը առանց խտրութեան սեւի և կոշման...
Յուզմունքը կրկնապատկեցաւ, երբ նոր ընտրու-
թիւններ անելու կարգադրութիւնները եղան:
Քաղաքական-գործիչները թուշու մէջ մի քաղա-
քից դէպի միւսը: Կենտրոնի և մասնականի էր:
Անսպասելի երեւոյթները իրական կերպարանք ա-
ռան: Իրականական ինքնավարութեան թշնամիներ
ուստիստութեան զոյգիչները բարձրացրին: Երբ մե-
ծամասնութիւնը իրանց կողմն է: Թէ ինչ էր այդ
եղեւորութեան պատճառը, — այդ ապագան կը պար-
զի. միայն անկարելի է անուշադրութեան տալ
այն ընդհանուր զայրոյթը, որով ամենքը դիմա-
ւորեցին իրականական պարլամենտական
ինքնավարութեան տալ այդ անսպասելիութեանը:
Պէտք էր որոշ և կտրական քաղ անել: Ամենքը
պատահաւ էին Գլխաւորն անեկընդուն: Հան-
ճարեղ ծերունիները երկար սպասել չը տուցը: Գլա-
ղաւորն կարծեալ իր նորամուտը ներկայաց-
րեց թագուհուն: Այդ այն միջոցն էր, որ իրան-
դիան առաջին շարժման ցնցումները տուցը:
Պարլամենտականները այդ ցնցումների տպաւորու-
թիւնը անմիջապէս ստացան: Յուլիսի 10-ին Վիկ-
տորիա թագուհին ընդունեց Գլխաւորն հրաժա-
րականը: Գլխաւորն հեռացաւ, և թագուհին իր
մօտ՝ Օսթրին կանչեց Սոլըբերգին: — Թէ ինչ պի-
տի անի Սոլըբերգին, թէ ովքեր պիտի կազմեն
նոր կաբլինետը, թէ ինչ զիջել պիտի բռնեն Չէմ-
բերլին և Հարթմանգոսը, թէ ինչ ընթացք պիտի
բռնէ նոր միտիստութիւնը, — դրանք քաղաքակ-
տական նրբութիւններ են, որոնք հետաքրքրական
չեն իսկ ապէս իրականական խնդրի համար,
այն իրականացիլ, որի բռնակը դիմեց է, որ դա-
ղեցնում է այս րօպէիս ամբողջ աշխարհը:

ՆԱՄԱԿ ԹԻԻՐԻՍԻԱՅԻՑ

Կ. Պօլիս, 1 յուլիսի

Մեծ վտանգ մը կը սպառնայ Սահմանադրու-
թեան: Պատրիարքն և Քաղ. Ժողովը Ատենայեան
Նուրիան Էֆէնդի կը հետևին այնպիսի ընթացքի
մը որոյ արդիւնքը պիտի լինի Սահմանադրու-
թեան ցնցումը: Համառօտ կերպով պարզեցը:
Սահմանադրութիւնը հաստատուելէն մի քանի տա-
րի վերջ տեսնուեցաւ փորձառութեամբ որ գոր-
ծադրութեան միջոցին քիչ մը զոտարութիւններ
կը ծագին, որիմակի համար, նիստ կազմուող հա-
մար կարեւոր էր 71 երեսփոխաններու ներկայու-
թիւնը, և սակայն քիչ անգամ կը պատահէր որ
այդքան թուով երեսփոխանք ներկայ գտնուին,
այս պատճառով ամիսներով նիստերը տեղի չէին
ունենար: — Սահմանադրութիւնը կը տարանջրէ
նաև որ երկու տարին մի անգամ բացուի Ազգ. Ժո-
ղովը և երկու ամիս նիստ ընէ, սակայն տեսնուե-
ցաւ որ անհնարին է հայ երեսփոխաններու երկու
ամիս ամէն օր շարունակ նիստի գալ: Ուրիշ այս-
պիսի անպատեհութիւններ ևս կային: Այդ միջո-
ցին ձեռնարկուած էր Սահմանադրութեան վերա-
գնման, հետևաբար այդ անպատեհութիւն-
ներն պիտի ջնջուէին, բայց տեսնուեցաւ որ վե-
րաքննութիւնը երկար պիտի տեւէ և մասնաւոր
որ անպատեհութիւններ պիտի ծագին, հետևաբար
վերաքննութեան խնդիրը մէկ կողմ դրուեցաւ.
բնական պէտք էր դիւրացնել Սահմանադրու-
թեան գործադրութիւնը, այս նպատակաւ բոլիշ
Ռուսիան որ այն ժամանակի երեւելի գործիչնե-
րէն մին էր, պատրաստեց ներքին կանոնադր մը
Ազգ. Ժողովը համար: Այդ ներքին կանոնադրով
կարգադրուեցան զոտարութիւնները և տասն
տարի է գրեթէ Ազգ. Ժողովը կանոնաւոր կերպով
իւր գործերը կը տեսնէ: Օսմանեան կառավարու-
թիւնը ամենին ձայն մը չը հանց, վասն զի
այդ ներքին կանոնադրով եղած բարեփոխմուն-
ւուն մէջ չը կար կէտ մը որ դաշէր տեւու-
թեան իրականացումը: Բայց հիմա Պատրիարք և
Նուրիան Էֆէնդի եւր կըսեն թէ՝ Ազգ. Ժողովը

նեղքին կանոնադրն ու Սահմանադրութիւնը
քանի որ իրարու հետ համահայն չեն, ուրիշ է որ
նախապատուութիւնը Սահմանադրութեան արդի-
ուստի մէկ կողմ նետուի և ներքին կանոնադրն:
Ինչ կըլլայ հետևութիւնը: Հետևութիւնը այն կըլ-
լայ որ Սահմանադրութիւնն անգործադրելի կը
մնայ և մեք կը ստիպուինք Սահմանադրութիւնը
վերաքննել: Ինչ կըլլայ Սահմանադրութիւնը վե-
րաքննելով: Այն կըլլայ որ Սահմանադրութիւնը
կը ջնջուի: Պէտք է զիտնալ որ այժմ Բ. Գուռը
չունի հայոց նկատմամբ այն տրամադրութիւնները
որ ունէր մէկ քառորդ դար առաջ: Այժմ ոչ թէ
նոր իրաւունքներ կուզեն տալ մեզ, այլ նաև ե-
ղածներն ալ կուզեն ջնջել:
Այդ իրաւունքները սեղմելու կամ ջնջելու
յարմար միջոցն է Սահմանադրութեան վերաքն-
նութիւնը: Անշուշտ Ազգ. Ժողովը պիտի պատ-
րաստէ նոր սահմանադրութիւն մը և պիտի խրկէ
Բ. Գուռը: Կառավարութիւնը պիտի ջնջէ այդ
նոր Սահմանադրութեան մէջէն ինչ կէտեր որ
ինքն ուզէ և Սուլթանը վաւերացնելով մնացեալը
կը խրկէ Պատրիարքարան, յայտարարելով որ նա-
խորդ Սահմանադրութիւնը ալ ևս դադրած է:
Այ անկէ վերջը թող տխրենք, թող յուսահտինք,
եղածը եղած է:
Արարք ըլլաւ. համար պէտք է խոստովանել
որ Բ. Գուռը ամենին մեղաւոր չէ, նա բոլորու-
միս ազատ թողած է զմեզ ընել ինչ որ կուզենք
մեր Սահմանադրութեան գործադրութեան մէջ.
նա ոչ վերաքննութիւն կը պահանջէ, ոչ բարեփո-
խութիւն. բայց երբ մեք կուզենք մեր ձեռքովը
խանգարել մեր գործերն, ինչ մեղաւոր է Գուռը:
Եթէ Նուրիան Էֆէնդի կուզէ այսօր փորձանք բե-
րել մեր Սահմանադրութեան զլիւսն չէ թէ Օսմ.
կառավարութեան ազդեցութեամբն է, ալ այն
օտարներուն, որոց անտանելի է մեր Սահմանա-
դրութիւնը:
Մեք շատ անգամ առիթ ունեցած ենք պախա-
րակել Ազգ. Ժողովը դատարկաբանութիւններն և
սխալ գործերն, սակայն մեղաւորը Սահմանա-
դրութիւնը չէ: Սահմանադրութիւնը պատուական
հիմնարկութիւն մ'է, որ բոլոր թուրքիցի հայերն
կը կապէ միմեանց հետ իշխանական միջոցներով.
ազգը տէր է իւր ներքին գործերուն և կարող է
իւր իրութիւնը, իւր հոգեւոր պէտքերն հոգալ
անկախ կերպով: Ազգը կարող է յարմար անձինք
ընտրել իրեն երեսփոխան և այն ատեն ամէն ինչ
կը կանոնաւորէ: Իսկ եթէ ազգը չունի յարմար
անձինք, այն ատեն ինչ որ ալ ընենք, միշտ գոր-
ծերնիս վատ է: Սահմանադրութեամբ գէթ ազգը
իւր գործերու տէրն է, ինքը ուզէ լաւ կը գործէ,
ինքն ուզէ վատ կը գործէ:
Ազգ. Ժողովը նիստերն այդ վիճաբանութեանց
հանդիսավայրեր կըլլան և չնորհիւ մեր անխիղճ
ատենախօսներու Օսմ. կառավարութիւնը պիտի
համոզուի թէ Հայերն օրինաց հակառակ կը վա-
րուն և ըստ այնմ գուցէ միջամտէ մեր գործե-
րուն: Ինչ ըսել. անտաւը կը կտրեն, կայնին
կոթը անտաւն է:
Եւ որ ժաման մեր առաջ կեննեն այս դժուարու-
թիւնները, ճիշտ այն պահուն, երբ շատ մը գործեր
կարգադրուած ալ ժամանակ պիտի ունենանք
զբաղելու ազգային կրթութեան խնդրով, բայց
քան տարի է ամէն անգամ որ այդ կրթութեան
խնդրով զբաղուող ժամը կը համրի, անս կը ծա-
ղի նոր խնդիր մը և ամէն ինչ կը մոռցուի:

Երբ կրօնական ժողով մ'ալ ունենք, ըստ Սահ-
մանադրութեան կրօնական և Քաղաքական ժողով-
ներն երկու տարի պաշտօն կը վարեն և վերըն-
տրելի չեն: Նախորդ կրօնական ժողովը, որը կը
նախագահէր Նորէն կաթողիկոս Նար-Պէյ, ընտրու-
եցաւ 84-ին և այն օրէն ի վեր բաւական ազ-
մուկ յարուց: Այդ կրօնական ժողովին մէջն էին
Պօլսոյ ամենին աչքի դարձող եկեղեցականները,
Խորէն կաթողիկոս, Մատթէոս կաթողիկոս, Ալի-
մօն կաթողիկոս, և երիտասարդ վարդապետներ:
Կատարեալ խաւարմով, կատարեալ աղայամիտ
կրօնական ժողով մը եղաւ և ոչ ալ ինչ:
Նոր կրօնական ժողովը որ կը բաղկանայ տասն
և չորս անդամներէ, ունի իւր մէջ երկու եպիսկո-
պոս, վեց վարդապետ, վեց քահանայ: Կաթողի-
կոսն: Այս վերջինն որ երջնկայի առաջնորդն
էր, հրաժարեցաւ և Պօլիս եկաւ, հիւանդ եւ ըսե-
լով պաշտօն չընդունեց զաւանդը. բաւական
վիճեցաւ Պատրիարքի հետ: Հմայակ կաթողիկոս
Պատրիարքարանի օրաշմարիտ, վասն զի կրօնա-
կրթութիւնը և խայտառակութիւններ կը հրատարա-

կէր: Այդ եպիսկոպոսն կը յանձնէր խմբագրու-
թիւնն այն թերթին, որուն ներքին իւր անունը
կար գէշն եղնող ամէն մարդու: Ինչ կըսէք այն
մարդուն որ իւր կնիքն յանձնէ հանդիպողին: Այ-
դու գաղափար մը կուենաւ այդ եպիսկոպոսին
վրայ:
Խորմեան Հայրիկ ընտրուեցաւ նախագահ ժո-
ղովին: Վարդապետներուն մէջ կը գտնուէին չնոր-
բով պարեկիշտ վարդապետներ: Քահանայներուն
վրայ ալ չը խօսուի վատ բան մը:
Ուրեմն այժմ կազմակերպուած են կրօնական
և Քաղաքական ժողովներն ամբողջապէս, տես-
նենք ինչ կերպարանք պիտի առնու. վասն զի Պօ-
ղոս կաթողիկոսի խնդիրն: Ծնորդ. Պատրիարքի
և Նուրիան Էֆէնդիի Պօղոս կաթողիկոս կը յաղ-
թանակէ: Չէք իրար երեսակայել թէ Պատրիար-
քարան ինչ տեսակ ցած և անարժան միջոցնե-
րուն դիմեց որպէս զի ապահովէ Պօղոսի յաղթա-
նակն: Այժմ վասն կը գտնուի Օրմանեան կաթո-
լիկոսը. վանեցուց յոյսն անոր վրայ է: Իսկ այս-
տեղ Հոռոմէական Հայոց Պատրիարքը շատ սիրա-
ւոր ընդունելութիւն ընելով վանեցի պատգամա-
ւորութեան որ դիմելով նորա կուզէին բանակ-
ցութեան մանել: Ազարեան Պատրիարքն ապա-
հովութիւններ տուաւ վանեցուց որ եթէ երեք
հարկւր ընտանիք կաթողիկոսութիւն ընդունեն, ին-
քն պիտի տայ իրենց լաւ առաջնորդ լաւ վար-
դապետներ, պիտի պաշտպանէ տայ իրենց իրա-
ւունքներն, վերջապէս թէ՛ այդ ընտանիքներն պիտի
փոխադրուին երջանկութեան դրախտը: Արեւելք
այս գաղափարներն — վասն զի բանակցութիւնները
զաղտնի կը մնային — հրապարակ հանեց, ամենայն
գործիքներ կը պատերազմի թէ Պօղոս կաթողի-
կոսի դէմ և թէ՛ կաթողիկոսութեան դիմողներու
դէմ: Գուռն է որ չարեաց առջնն առնուի,
բայց քանի որ Պատրիարքարանը այդքան անդա-
դադարն է, չենք գիտեր թէ յուսալ ներելի է:

Խօսելով Ազգ. Ժողովը վրայ, մոռցանք ըսել
թէ՛ Ժողովը իւր դիմանք ամբողջացուց ներկայ
տարւոյս համար: Արդէն պ. Մերիէմ-Գուլ ընտ-
րուած էր Ա. ատենապետ, ընտրուեցաւ երկրորդ
ատենապետ պ. Թիւրքեմեան և Գ. ատենապետ,
Թիւրքեմեան Էֆէնդի: Իսկ Ա. ատենապետ պ. Սը-
լման: Այնպէս որ այսօր դիմանք կառավարու-
ման մասին Յառաջադիմական միութեան ան-
դամներէ: Բայց ինչ օգուտ, երբ կըլին թուա-
մարթութեամբ կը սեղմեն ամենին ծանր պարա-
գայններու մէջ պ. Փարիզեանի ձեռքը:
Արդէն ծանօթ է ձեռ Պարսկաստանի խժոժական
դէպքը, այս առթիւ Արեւելք-ի մէջ կը կար-
գանք հետեւեալն:
Մանչէսթըր յունիս 27 թուով կը գրեն մեզ.
«Անցեալները դրած էի ձեռ թէ Սալմաստի մէջ
(Սալմաստական) պարսիկ կառավարին հրգիսի
խժոժութիւն մը ի գործ դրած է, հայ քահանայն
կապելով շան մը հետ, և անկողնայ ծեծելով, և
թէ տեղւոյս հայ գաղթականութիւնն աղբւրսգիր
մը մատուցած է Դահլիճ լորտ Ռուզպըրի միջո-
ցաւ: Այս առաւօտ հոս հետեւալ պատասխանն
հասաւ հեռագրաւ.
Թէ հարն, 26 յունիս, 1886
Գ. եր. Հայր Պարոնեան, Առաջնորդ
հայ հասարակութեան ի Մանչէսթըր.
«Անգղիոյ Հայոց աղբիւրագիրը մատուցի Վեհ.
Դահլիճին: Ն. Կաթողիկոսն Վեհապետութիւն
յոյժ գայրաւորով նշանակուած իրողութիւններէն,
հրամայեց որ յանցաւորը յօրինակ աղբիւր
ստեղծէ, և ամենակատարաւ արգարութիւն ի գործ
դրուի: Հաճեցեք զայս ծանուցանել խնդրարկուաց,
որը ասոր մէջ պիտի տեսնեն ապագային այն բար-
ձր արգարաւորութեան օգուտն, որով կը շարժի մեր
Օգոստ. Վեհապետն իւր հպատակայ նկատմամբ
ստանայ կրօնի խորութեան:
(Ստորագր.)
Արտաքին գործոց նախարար Պարսկաստանի
ԵԱՀԱ
«Մանչէսթըրի հայ գաղթականութիւնն անմիջա-
պէս 90 արեւելի հեռագրաւ մը չնորհակալու-
թիւն յայտնեց Վեհ. Դահլիճ հոգաւորութեան հա-
մար»:
Թիֆլիզէն Պօլիս մի քանի բարեկամաց գրուած
նամակներու մէջ զիտողութիւններ տեսայ այն մի-
քանի տղերու մասին զոր դրած էի «Մշակ»-ի
մէջ, պ. Մերենցի (Փոռնի) մէջ հրատարակած
յօդուքին ստեղծ: Չմի գիտեր թէ անիրաւ եմ
հրատարակութիւններ ընելով պ. Մերենցիի դէմ:
Թէ ես և պ. Մերենցի բարեկամ եղած լինեք այդ

պատճառ մը չէ որ նորա գրադարութիւնները
յարգեցէք: Պ. Մերենցի իւր «Վեհ. Թորոս» վիպա-
սանութեամբ օգտակար եղած է ազգին, այդ կը
խոստովանինք, բայց չենք կրնար ըմբռնել թէ
այդ վիպասանութիւնը կուտայ իրաւունք իրեն
զրպարտելու «Մշակ»-ը:
Պ. Մերենցի երկար ատեն Թիֆլիզ անցուցած
լինելով իւր ժամանակն, ի հարկէ կը համարուի
իւր մօտէն տեղեկութիւն ունեցող անձ Ռուսա-
հայոց գործերուն, ինքն ալ Պօլիս յարգանք ու
պատիւ գտած ըլլալով իւր խօսքերն ունին իրենց
կշիռն, հետևաբար նա պարտական էր բարեխղ-
ճութեամբ գրել շարժել: Թէ «Մշակ» յայտ հակա-
ռակորդաց ունի քննադատելի կողմեր, այդ հաս-
կնալի է և պէտք էր պարզել այդ քննադատելի
կողմերն: Բայց ինչ կընէ պ. Մերենցի, նա կը յայ-
տարարէ թէ «Մշակ» անկրօնութիւն կը քարոզէ,
թէ «Մշակ» նման է այն Պօլսոյ թերթին որ
ամենայն խայտառակութեամբ կը վաճառէ իւր
համոզումներն: — Այսպիսի օրիշ զրպարտութիւն-
ներ:
Բարեխղճութեամբ յայտնուած ամէն կարծիք,
որքան ալ մեզ հակառակ լինի, յարգելու պարտա-
կան ենք, բայց ոչ թէ զրպարտութիւններ:
Ի սկզբան տրամադիր չէի ոչ և է բան գրել պ.
Մերենցիի այդ յօդուքի մասին, սակայն յետոյ
տեսայ թէ բաւական կարգացուել է և մօթեր կը
պղտորէ, ուստի այդ յօդուքին: Եթէ ժամանակս
ներէ հաւանորէն «Մշակ» մէջ ևս խօսիմ, և այն
ատեն կարծեմ թէ խնդիր կը պարզուի:
Հայկակ
ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ
— Վերջին լուրերը տեղեկացնում են, որ անդ-
լիսները և բերմանցիները մէջ կուենանք շա-
րունակվում են Վերին-Բիրմանիայում: Անձրեային
կառնակների պատճառով անգլիացոց զորքերի
մէջ հիւանդութիւն է երևացել: Զորքի 30 տոկո-
սը հիւանդանոցներում պառկած է:
— Չերնօգորայի սահմանների վրա խառնակու-
թիւնները չեն դադարում: Յուլիսի 3-ին տաճիկ-
ների մի խումբ նորից անցաւ սահմանափոխ-
յարձակվեցաւ Չերնօգորայի մի քանի գիւղերի
վրա: Այդ մասին Չերնօգորայի Պօլիս ներկայա-
ցուցիչը դիմեց Բ. Դրանը: Մեծ-Վիդրը անմիջա-
պէս հարկաւոր հրամանները ուղարկեց Կալաշին,
խաղաղութիւնը վերականգնելու նպատակով:
— Ֆրանսիական պատգամաւորների ժողովի
յուլիսի 10-ի նիստում, մի պարոն, Կապիւս ա-
նունով, ատրճանակ արձակեց և ապա առաջ դը-
ցեց մի նամակ: Կապիւս իր պատգամաւոր-
ների ուշադրութիւնը: Կապիւս բանւոր է: Ենթա-
դրում են, որ նա հոգեկան հիւանդութիւն ունի...
Նամակը լինել էր անմիտ ֆրաւնեւով:
— Տրիեստից հեռագրում են, որ խօսքերն օրից
օր սաստկանում է: Կանչուած են էլի մի քանի
բոլշևիկներ:
— Աբխազիայի թագաւորը, ինչպէս հաղորդու-
մ են եւրօպական թերթերը, մտադիր է շուտով մի
մեծ ժողով կազմել իր բարձր աստիճանաւորնե-
րից: Կարծում են, որ ժողովի քննութեան նիւթը
պատերազմական հարցեր կը լինեն:
— Եւրօպական լրագիրները մէջ տպվեցաւ Օմա-
լի դուքս Հինդիկոսի նամակը, որը ուղարկված է
հանրապետութեան նախագահին: Երբ գնեցաւ
Բուլանթէ յայտնեց Օմալի դէպին, որ նրա ա-
նունը հանդիմ է ֆրանսիական զորքի ցուցակնե-
րից, նա դիմեց նախագահին այդ խնդր և վրա-
ւորական նամակով, որի վերջումը յայտնու-
մ էր, որ այնու ամենայնիւ, ինքը մնում է գնեցաւ Հին-
դիկոս Օմալի դուքս: Այդ նամակը եղաւ զլիսա-
ւոր պատճառը, որ վճեցինք արտորել նրան Ֆրան-
սիայից:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՄՆԱՍՏԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

ՍՕՖԻԱ, 12 յուլիսի: Երէկ իշխանը գոցեց աղ-
դային ժողովը մի ճառով, որով ժողովին յայտ-
նեց չնորհակալութիւն կառավարութեան կողմից
առաջարկած օրէնքների ընդունելու մասին:
Կ. ՊՈԼԻՍ, 12 յուլիսի: Բոլորայի իշխանի
ցանկութեան համեմատ, Արեւելա-Բուլանցիայի
օրգանական կանոնադրութեան վերաքննութեան
համար նշանակված պատգամաւորները կուղե-

Ա. ՊԵՏԵՐԲՈՐԳԻ ԲՈՐՍԱ				
Յուլիսի 14-ին				
Ռուսաց	1	բուլլ	Լոնդոնի վրա արժէ	23 ¹³ / ₈₂ պէնս.
—	—	Համբուրգի վրա	—	199 ¹ / ₄ պֆ.
—	—	Փարիզի վրա	—	246 ³ / ₄ սան.
Ռսկի	—	արժէ	—	8 ռ. 46 կ.
Մաքսային կոպոնսներ	—	. . .	8	> 46 >
Արծաթ	—	—	. . .	1 > 26 >
Բորսային զիկսնաներ	—	. . .	41 ² / ₂	4 6 ⁰ / ₀
Պետակ. բանկ. 5 ⁰ / ₀	տոմս	1-ին շրջանի	100	> 87 կ.
—	—	2-րդ	—	100 > 05 >
—	—	3-րդ	—	100 > 73 >
—	—	4-րդ	—	100 > 12 >

Նոր երկաթուղային ընտան . . . 99 » 37 »
Թիֆլիսի քաղաք, կրեդ. ընկ. օբլ. . 86 » 50 »
Ս. Պետերբուրգի բոլոսայի տրամադրութիւնս

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՀՅԿՈԼԵԴ
Ս. ՄԻՈՒ Կ ԸՆԿ.
(II, 4857.) 21—50 (Կ)
